Հասցեատեր՝
«Շիրակ ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ fcshirak58@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28.08.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նարեկ Ադամյան
	Նազելի Արսենյան

Վարույթ՝	ՊԼ-016
Խախտում՝	1. Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի կողմից մարզադաշտի տարածքում չթույլատրված գովազդների տեղադրումը (Հավելված 1 Ա, 42-րդ կետ) 2. Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի կողմից մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ) 3. Խաղադաշտի որակի անբավարար լինելը (Հավելված 1 Ա, 78-րդ կետ)
Առաջնություն՝	Fastex Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Շիրակ» - «Արարատ-Արմենիա», 24.08.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
   «Նկատողություն» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ համանման կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
   «Նախազգուշացում» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու

դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել։

3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»։
   «Նախազգուշացում» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել։
   Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 27-րդ հոդվածի 2-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին հրահանգել շտկել խաղադաշտի որակային թերությունները և համապատասխանեցնել վերջինս ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգով (2021թ. խմբագրություն) սահմանված չափանիշներին։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։

- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։